

## **ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020թ. ժամանակահատվածի համար համագործակցության միջպետական ծրագիր**

ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի 2008թ. նոյեմբերի 14-ի որոշմամբ հավանություն է տրվել «**ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020թ. ժամանակահատվածի համար համագործակցության միջպետական ծրագրի**» մշակմանը: Հայաստանի կողմից Ծրագրի նախագծի մշակման Ազգային պատվիրատու է սահմանվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ որպես ինովացիոն ոլորտում ՀՀ կառավարության պետական լիազոր մարմին, իսկ նախագծի Ազգային մշակող է նշանակվել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը: Համատեղ աշխատանքների արդյունքում մշակվել է Ծրագրի նախնական նախագիծը, որը հավանության է արժանացել ԱՊՀ կառավարությունների ղեկավարների Խորհրդի 2011թ. հոկտեմբերի 18-ի նիստում:

Ծրագրի ազգային մասում ներկայացվել է հինգ ինովացիոն նախագիծ, որը նախատեսվում է իրականացնել Ծրագրի շրջանակում՝ համաֆինանսավորման սկզբունքով: 2010թ.-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների համակարգում գործող բոլոր գիտական կազմակերպություններից և բուհերից հավաքագրվել են տնտեսության մեջ ներդրումային արժեք ներկայացնող ինովացիոն նախագծերի հայտեր և համապատասխան չափանիշներով ընտրվելուց հետո (ընտրությունը կատարվել է Ծրագրի պատվիրատու-համակարգողի և գլխադասային մշակողի կողմից առաջարկված՝ ինովացիոն նախագծի անձնագրի պահանջներին համապատասխան): Ծրագրի մշակման նպատակով ձևավորված աշխատանքային խմբին են տրամադրվել ստորև ներկայացվող հինգ նախագծերը.

### **1. «Ձոնալ անվտանգության համակարգ» նախագիծը.**

Նախագծով առաջարկվում է նանոմասշտաբի դիրքի շեղում գրանցող աննախադեպ բնութագրիչներ ունեցող տվիչների հիման վրա նոր դասի ընդունիչների մշակումը և դրանց արտադրության կազմակերպումը: Առաջարկվող տվիչները մեծապես գերազանցում են աշխարհի բոլոր սեյսմիկ ստանդարտները՝ հատկապես դանդաղ ընթացող մեխանիկական տեղաշարժերը և տատանողական պրոցեսները գրանցելիս:

### **2. «ԱՊՀ երկրների կրթական-հետազոտական ինովացիոն կենտրոնների ստեղծում» նախագիծը.**

Նախագծով նախատեսվում է կրթական-հետազոտական ինովացիոն կենտրոնների ստեղծում ԱՊՀ մասնակից երկրների ինժեներական բուհերի բազայի վրա. առաջարկվում է միանգամայն նոր մոտեցում ԱՊՀ երկրներում ինժեներական

կրթության որակի բարձրացման գործում: Արդիական գիտատեխնիկական բազա ստեղծելու և բարձր որակավորում ունեցող ինժեներական կադրերի պատրաստման շնորհիվ կենտրոնները կարճ ժամկետներում ինովացիոն ինժեներական նախագծերի մշակման համար պայմաններ կապահովեն՝ այսպիսով նպաստելով ձեռնարկությունների և գիտահետազոտական կազմակերպությունների կողմից մշակված նորագույն տեխնոլոգիաները արտադրության մեջ ներդնելուն: Նախագծի իրականացմամբ գիտատար ոլորտներում համագործակցության ամուր հիմքեր կստեղծվեն՝ ԱՊՀ տարածքի տնտեսության իրական հատվածում բարձրացնելով նորամուծությունների կիրառման մակարդակը:

**3. «Երեք տիպի ավտոմատացված համալիրների մշակում միկրոօրգանիզմների, բույսերի և կաթնասունների բջիջներում կենսական ցիկլի ընթացքում տեղի ունեցող բիոքիմիական, ֆիզիոլոգիական և այլ պրոցեսների քանակական ցուցանիշների գրանցման համար» նախագիծը.**

Նախագիծը վերաբերում է միկրոօրգանիզմների, բույսերի և կաթնասունների բջիջներում կենսական ցիկլի ընթացքում տեղի ունեցող պրոցեսների պարամետրերի (գործնականում անսահմանափակ թվով) միաժամանակյա չափման նոր բարձր արդյունավետություն ունեցող մեթոդների մշակմանը, ինչը ժամանակակից կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, բժշկության, դեղագործության և հարակից ոլորտների առաջնահերթ խնդիրների թվին է պատկանում:

**4. Նանոտեխնոլոգիաների ոլորտում միջպետական ինովացիոն մեկնարկային նախագիծը.**

Նախագծի հիմնական խնդիրը նանոֆիզիկայում լայնորեն կիրառվող համակարգերում տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսները նկարագրող ունիվերսալ փորձարարական և տեսական մոդելի մշակումն է, որի շնորհիվ հնարավոր է դառնում տեխնոլոգիական շատ խնդիրների նորովի լուծումը և կիրառումը գիտության և տեխնիկայի շատ բնագավառներում, մասնավորապես՝ նոր սերնդի մի շարք սարքեր մշակելու շնորհիվ:

**5. «Գազի և ծխի հրդեհային ինտելեկտուալ կիսահաղորդչային նանոսենսորների մշակում և փորձարարական արտադրության կազմակերպում» նախագիծը.**

Նախագիծը վերաբերում է մետաղօքսիդային կիսահաղորդիչների հիման վրա ջրածնի, բնական, կենցաղային և շմոլ գազերի արտահոսքը գրանցող նանոբյուրեղային սենսորների ստեղծմանը և փոքրամասշտաբ արտադրության կազմակերպմանը: